# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ Աննա Խաչատրյան-ն ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Գյուղմթերք | Գյուղմթերք | Գյուղմթերք | Կարտոֆիլ 1-ին տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների չափսերը՝ ընդհանուր քաշի 60%՝ կլոր-ձվաձև 10-14 սմ, 20 %՝ կլոր-ձվաձև 8-10 սմ, 20 %՝ կլոր-ձվաձև 6-8 սմ: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս: Պալարները պետք է լինեն տվյալ բուսաբանական տարատեսակի համար սովորական արտաքին տեսքով, ամբողջական, պինդ, գործնականորեն մաքուր: Չի թույլտատրվում արտաքին տեսքի, որակի, փաթեթավորված ապրանքի պահպանվածության և ապրանքային տեսքի վրա ազդող ներքոհիշյալ արտաքին և ներքին թերությունների առկայություն (ՀՍՏ 354-2013 կամ տվյալ ստանդարտի ցուցանիշներին համարժեք): Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական երկու անգամ երկուշաբթի օրերին՝ ոչ շուտ քան 8:30-ից մինչև ոչ ուշ քան 16:30: Մթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 1 օր: Մատակարարումն իրականացվում է տեխնիկական բնութագրում նշված օրը՝ նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով, *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով։ Տեղեկացվում է, որ տվյալ սննդամթերքի կասկածելի որակի կամ տեսքի դեպքում այն կներկայացվի փորձաքննության՝ ապրանքի որակի համապատասխանությունը բնութագրում ներկայացված պահանջները հաստատելու նպատակով։ Տեղեկացվում է նաև, որ սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով։Համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 31-ի «Իջևան համայնքի ենթակայության մանկապարտեզների կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացը ուսումնասիրելու նպատակով մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 20 կարգադրության համաձայն հանձնաժողովը պարբերաբար հետևելու է մատակարարների հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարմանը։ Հանձնաժողովը անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Анна Качатрян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | | |